

**Միքայել Կյուրճյանի դիմանկարը Երվանդ Ազատյանի
աշխատություններում**

Զարմանյան Հերմինե

Հանգուցային բառեր. Հելլոպոլսի հիվանդանոց, Հարություն Մկրյան, Մարտիկ աղա, Մահմանաղիբ Ռամկավար կուսակցության անդամներ, գրագետ Կյուրճյան, Ալֆոնս Դոդե, Երվանդ Օտյան, Գոնկուր եղբայրներ, «Քսան տարի ետք» թատերախաղ

Նախաբան

Երվանդ Ազատյանը սփյուռքահայ գրականության զարգացման տարբեր փուլերի ականատես-վկան է: Նրա գրականագիտական աշխատությունների ուսումնասիրությունն ականատեսից աչքերով իրադարձությունների, անհատների և նրանց ստեղծած գրական արժեքների մասին բացառիկ տեղեկություններ ստանալու հնարավորություն է, ինչպես նաև տեղեկությունն անձամբ ականատեսից ճշտելու, աշխատություններում դրսևորվող գրականագիտական հայացքների մասին հետաքրքրող հարցերի վերաբերյալ մանրամասն և համապարփակ մեկնաբանություն ստանալու հնարավորություն, ինչն ուսումնասիրության արդյունքի հավաստիությունը բարձրացնում է առավելագույն աստիճանի՝ իր հերթին դյուրին դարձնելով թե՛ Ազատյանի գործն ուսումնասիրողների և թե՛ նրա հողվածները, ակնարկներն ու գրականագիտական այլ աշխատությունները որպես աղբյուր կիրառողների աշխատանքը:

Սույն հողվածում նպատակ ենք հետապնդում Երվանդ Ազատյանի աշխատություններում արձակագիր, դրամատուրգ, խմբագիր Միքայել Կյուրճյանի կյանքի ու գործունեության, գրական ժառանգության ուսումնասիրությունը: Գրականագետի հայացքն առաջին հերթին հակվում է գրական այն դեմքերին, որոնց ստեղծագործություններն ասելիքով և կշռով հայ գրականության մնայուն արժեքներ են: Այդպիսի անհատներից է Միքայել Կյուրճյանը, ում ստեղծագործական արժեքավոր ժառանգության մեծ մասը հայ ընթերցողին մնալու էր անհայտ, եթե չլինեին Երվանդ Ազատյանի պահոցը և այն հանրայնացնելուն միտված ջանքերը:

Կյուրճյանի մասին գրականագետի բազմաթիվ հողվածներ գրողին ճանաչելի են դարձնում տարբեր կողմերից: Միքայել Կյուրճյանի մասին Երվանդ Ազատյանն ունի ոչ միայն գրականագիտական ուսումնասիրություններ, այլև էսսեներ, որոնք, բացի գեղարվեստական արժանիքից, ունեն աղբյուրագիտական նշանակություն:

Հողվածի բովանդակությունը

«Ով պիտի տնկե վառենի մը. Միքայել Կիրճեանի մահուան Ա. Տարեկիցին առիթով» էսսեում Ազատյանն ասում է. «Միքայել Կիրճեան գրական ԽՈՍՏՈՒՄ մըն էր 19 տարեկանին. մեծ ԽՈՍՏՈՒՄ մը մնաց նաեւ մինչեւ իր 86 տարիքը եւ առանց ամբողջովին յարգած ըլլալու այդ խոստումը՝ մեկնեցաւ այս աշխարհէն...»¹: Կորչելուց մեկ շաբաթ անց Կյուրճյանին Հելիոպոլիսի հիվանդանոցի դիախերձարանում գտնելու տեսարանը նկարագրելիս Ազատյանի խոսքը նատուրալիստական երանգներ է ձեռք բերում: «Կենսասէր Կիրճեանէն ձգախէժի նման քաշուող ու առածգական կոյտ մը մնացած էր, փոշինէրով ու կուպրով ծածկուած: Ծոծրակէն հոսած սեւ արիւնը կուպրի թանձրութեան մէջ կ'աներեւութանար...»²: Հեղինակը ընթերցողի ուշադրությունը հրավիրում է գրողի անխնամ կոշիկներին, որոնք մշտապէս փայլեցված և խնամված են եղել: Դրանց մասին Ազատյանը մի քանի անգամ հիշատակում է՝ ընդգծելով դրանցով քայլողի բնավորությունը, ապա նաև անցած ճանապարհը: «Իրեն պէս հաստատուն կօշիկները տակաւին հագուած կը պահէր. անոնք իր մարմնին խարիսխն էին. եռանկիւն մը կը կազմէին գետնին վրայ, եւ հաստատ կը պահէին ծերունի գրողը»³: Կոշիկները դառնում են միջոց և տեղափոխում անցյալ: Ազատյանը ներկայացնում է գրողի հետ ունեցած մտերմության հինգ տարիներից պատանիկներ, որոնք բնութագրում են Կյուրճյան մարդուն և մտավորականին:

Ակնարկում անդրադարձ է կատարում նաև Կյուրճյանի թողած գրական ժառանգությանը: Զուգահեռներ են տարվում նրա կենսակերպի, շփման շրջանակի և գրական հերոսների միջև՝ ընդգծելով դրանց միջև եղած ահռելի տարբերությունը: «Թէեւ Կիրճեան իր գրական վայելքները ապրած է յաճախ սալոններու պերճութեան մէջ, սակայն իր ստեղծագործութեան աղբիւրը հանդիսացած են մեր ժողովուրդի խոնարհ խավերուն բարքերը, ապրումները, յոյսերն ու ներշնչումները»⁴: Գրողին «պոլսահայ բարքերու ուսումնասիրութեան վարպետ» անվանած վավերագիրը նրա գրչի ուղենշի կորստի պատճառը համարում է 1896 թ.-ի ջարդերից հետո սեփական հողից կտրվելը, ապա նաև 1915թ.-ին հայության ոչնչացումը: «96-ի ջարդերէն ետք, Մեծ եղեռնը հիմնայատակ կործանեց Պոլսոյ եւ

¹ Ազատեան Ե., Գրական գեղարուեստական սեւեռումներ, Ամերիկահայ միջազգային գոլէճ, 1988, էջ 67:

² Նույն տեղում, էջ 68:

³ Նույն տեղում, էջ 68:

⁴ Նույն տեղում, էջ 75:

գավառի հայութեան կեանքը և այնքան ճոխ, իւրայատուկ ու տոհմիկ կենցաղ մը խեղդուեցաւ զայն ստեղծող ժողովուրդի յորդառատ արեան մէջ»⁵: Հետագայում գրողի գրական «դեգերումների» պատճառն Ազատ-յանը համարում է վերջինիս գրիչը ստեղծագործությանը կենսահայութեամբ մատակարարող երակից կտրելը: Արդյունքը տարբեր սեռերով և ժանրերով ստեղծած գրականությունն է, որը ցրված է մամուլի պահոցներում և սպասում է «խնամատար ձեռքի», որպէսզի դառնա մեր գրական ժառանգության մասը: Գեղարվեստականության տպավորիչ օրինակ է էսսեի վերջաբանը. «Կատողեր են պլեծուփ վառենիները, իրենց գոյնին առատութեամբ ու գեղեցկութեան շռայլութեամբ: Սակայն չկայ այդ գեղեցկութիւնը իր ջիղերուն ու արեան բաբախումով վայելող պատանի ծերունին, Միքայէլ Կիրճեանը: Ո՞վ պիտի տնկէ արդեօք իր հողաթումբին վրայ իր այնքան սիրած վառենին...»⁶:

«Միքայէլ Մ. Կիրճեանի գրական դիմագծի» բացահայտումը ևս Ազատյանն սկսում է նրա մարդկային դիմագծի բացահայտումից: Այն իրապատում է՝ ներկայացված գեղարվեստական ոճով, ինքնատիպ շարադրանքով. հերոսների նկարագիրը գունեղ է, խոսքը՝ պատկերավոր, հյութեղ ու տպավորիչ: Նկարչուհի Նորա Իփեքյանի արվեստանոցում Կյուրճյանի «Քսան տարի ետք» թատերախաղի բեմադրության հաղթանակին նվիրված երեկոյի իրադարձությունների նկարագրության շնորհիվ Կյուրճյանին ընթերցողը տեսնում է կենդանի, կարծես ինքն էլ մասնակցում է խնջույքին: Նրա հետ միասին ընթերցողին են ներկայանում նաև հավաքույթի մասնակից մյուս մտավորականներն՝ իրենց բնավորություններով, հումորով, որոնք Ազատյանի գրիչը ներկայացրել է վարպետությամբ. «Իսկ նկարիչ Ջորեան, որ կը դիտեր ծերունի գրողին ճաշակած համադամները, կատակով կ'ըսէր անոր. «Վարպէ տ, դուք ապերախտ փոր մը ունիք, ո՞ւր կը տեղաւորէք այսքան ուտելիք»»⁷: Այս դիմանկարում տեսնում ենք նաև նկարչուհի Նորա Իփեքյանին, ով «Քսան տարի ետք» պիեսի բեմականացման մեջ գլխավոր դեր ունէր, որդուն՝ Ժիրայր Փափազյանին՝ իր նվերով, Ազատյանին, ում խմբագրած «Արևում» լույս էին տեսնում Մ. Կյուրճյանի ստեղծագործությունները: Գրականագետի կողմից Կյուրճյանին հատկացվող բացառիկ ուշադրության պատճառներից մեկն այն է, որ նա մեծերի հետ և մեծերի պէս էր մտել հայ գրականու-

⁵ Նույն տեղում, էջ 75:

⁶ Նույն տեղում, էջ 76:

⁷ Ազատեան Ե., Ժամանակի և ժամանակակիցներու հետ, Թէքէան մշակութային միութիւն, Երեւան 2018, էջ 60:

թյուն, սակայն գրական վաստակն ըստ արժանվույն չի գնահատվել:

Ազատյանը նշում է, որ ֆրանսիական գրականության մեջ Գոնկուր եղբայրները համահեղինակությամբ հրատարակում էին վեպեր և հաստատել էին զույգ հեղինակներով վեպեր հրատարակելու սկզբունքը, սակայն հայ գրականության մեջ սա եզակի երևույթ էր, ուստի Կյուրճյանը, որ համահեղինակ է բազմաթիվ թատերախաղերի, սովերում է մնացել հաճախ: Օրինակ՝ որպես «Չարչըլը Արթին աղա» և «Շերոսախաղը» երգիծական թատերավեպերի հեղինակ նշվում է միայն Օտյանի անունը, ինչի պատճառն, ըստ Ազատյանի, նրա՝ ավելի հանրաձանոթ լինելն է: «Բեմադրութեանց եւ նոյնիսկ հրատարակուած գրութիւններու մէջ ալ երբեմն կատարուած է այդ մեղանշումը»⁸: Ազատյանը մեջբերում է հեղինակի խոսքը. «Եղբայր, Օտեանը արդէն հարուստ է, բայց աղքատին ունեցածն ալ կ'առնեն եւ հարուստին կը նուիրեն»⁹: Նույնիսկ գրականագետ Մինաս Թեոլոյանն է մեղանշել այս հարցում՝ «Դար մը գրականութիւն» գրքում «Մարտիկ աղա»-ն վերագրելով Երվանդ Օտյանին¹⁰: Օտյան-Կյուրճյան համահեղինակությամբ գրված երկերը ևս, թէև ունեին երկու հեղինակների անունների սկզբնատառերից կազմված Կյուրօտ ստորագրությունը, հաճախ վերագրվում էին միայն Օտյանին: Սամվել Մուրադյանը, օրինակ, պատճառը համարում է համահեղինակությամբ գրված ստեղծագործությունների մեջ դրսևորված աշխարհայացքի, գեղագիտական նպատակադրման, լեզվական ու պատկերավոր մտածողության ընդհանրությունների գերակշռող լինելը. «Ահա ինչու «Մարտիկ աղա» վեպը վերագրեցին մեկ Տիգրան Կասաբեկյանին, մեկ՝ Արփիար Արփիարյանին, մեկ՝ Օտյանին...»¹¹: Երվանդ Ազատյանը հիշում է նաև Կյուրճյանի վրդովմունքը, երբ իրեն շփոթում էին վաղամեծիկ Մելքոն Կյուրճյանի հետ: Ազատյանի այս հիշողություններում ի ցույց են դրվում գրողի զգայուն հոգին, բնավորության առանձնահատկություններն ու նրա շուրջ ծավալվող իրադարձությունները, որոնք Ազատյանի շնորհիվ նաև հայ գրականության պատմության մաս են դարձել: Վեր հանելով խնդիրները՝ չի մոռանում նշել նաև Կյուրճյանի հանդեպ գրական և

⁸ Նույն տեղում էջ 63:

⁹ Նույն տեղում, էջ 63:

¹⁰ Տե՛ս Թեոլոյան Մ., Դար մը գրականութիւն, 1850-1950, հատոր Ա, Գահիրե, 1955, էջ 597:

¹¹ Մուրադյան Մ., Երվանդ Օտյանի և Միքայել Կյուրճյանի հեղինակած կատակերգությունները, «Բանբեր Երևանի համալսարանի», հմ.1 (82), Երևան, 1994թ., էջ 34-50:

հասարակական շրջանակների համակրանքը, որը նա վայելում էր՝ շնորհիվ իր անձի և տաղանդի:

«Միքայել Կիրճեան գրողը» հոդվածում ներկայացվում է հասարակական գործիչն ու գրողը: Ազատյանը Մ. Կյուրճյանին համարում է Մովսեսի հոգեգավակը, ում «մեծությունը» ուղեկցեց նրան ողջ կյանքի ընթացքում՝ ազդելով նաև գրականության վրա: Կյուրճյանն իր գործունեությունը սկսել է արևմտահայ մեծ գրողների հետ, որոնցից շատերին եղեռնը գլխատեց: Կյուրճյանի՝ որպես արևմտահայ պայծառ մտավորականության վերջին մոհիկաններից մեկի դերն ու կշիռը Ազատյանը բացառիկ է համարում. «Կիրճեան գրեթե վերջինն է այդ հոյլէն, ու իր անձնական տաղանդին հետ իր հետ տակաւին կ'ապրեցնէ նաեւ գրական ամբողջ մթնոլորտ մը»¹²: Կյուրճյանի՝ գրականության մեջ ունեցած դերին գուզահեռ գրականագետը ներկայացնում է հասարակական գործչին, ով հիմնադրեց օրաթերթ, կուսակցություն՝ անկախ այն բանից, որ սկզբունքային անկուսակցական էր, թղթակցեց մի շարք թերթերի, եղավ խմբագիր: Հասարակական, քաղաքական ակտիվ գործունեությունը հաճախ է խանգարել գրողներին լիարժեք նվիրվել գրականությանը: Կյուրճյանը բացառություն չէր: Ազատյանն ինքն էլ այս խնդիրն ունի: «Իր էութենէն ու նկարագրէն բխող գրական գործունեութիւնը եղած է այնքան անանձնական, որ իր ստեղծագործութիւնները հատորի մը գուրգուրոտ ծածկին տակ հաւաքելու փոյթն ու մտահոգութիւնն անգամ չէ ունեցած ինք մինչեւ իր ութսունամեայ հասակը»¹³: Ազատյանը ցավում է, որ գրողը, լինելով եղեռնագոհ տաղանդավոր մտավորականության ժամանակակիցը, չդարձավ նրանց կյանքի վավերագրողը և Սփյուռքի նոր սերնդի կողմից անուշադրության մատնվեց: «(Նա), որ ժամանակակից, գրչակից, սրտակից ու սրճակիցն էր մեր գրական ամէնէն պայծառ դէմքերուն: Ան ճամբայ ելած է անոնց պէս, սակայն իր ամէնէն ապրող էջերը տուած է անոնց ստեղծած մթնոլորտին ու պայմաններուն տակ, այնուհետեւ կարծեք ինքզինք յանձնելով մոռցուելու բացայայտ ճիգի մը»¹⁴: Գրականագետ Գառնիկ Ստեփանյանը գրում է. «(Միքայել Կյուրճյանը) Մեծ եղեռնից հետո հազվադեպ է երևացել մամուլում: Այդ տարիների նրա միակ ծավալուն գործը՝ «Քսան տարի ետք» կատակերգությունն է, որը յուրահատուկ շարունակությունն

¹² Ազատեան Ե., Գրական գեղարուեստական սելեռումներ, Ամերիկահայ միջազգային գոլէճ, 1988, էջ 79:

¹³ Նույն տեղում, էջ 80:

¹⁴ Ազատեան Ե., Գրական գեղարուեստական սելեռումներ, Ամերիկահայ միջազգային գոլէճ, 1988, էջ 86:

է «Չարշըլը Արթին աղայի»: Մամուլում տպագրել է նաև ուշագրավ հոդվածներ արևմտաեվրոպական դասական գրողների մասին»¹⁵, սակայն գրականագետ Երվանդ Ազատյանը հերքում է այս պնդումը: Նա վստահ է, որ եթե Կյուրճյանի գրական ժառանգությունը մամուլի էջերից դուրս բերվի, ապա հատորներ կարող է կազմել: Մինչդեռ լույս է տեսել ընդամենը 3 փոքրիկ ժողովածու: «Կիրճեանը ժլատ չէ եղած, իր գրականությունն հանդէպ անհոգ է եղած, թերթերու մէջ գրածը չի հաւաքած»¹⁶:

1964 թ. Բեյրութի «Մեւան» հրատարակչության լույս ընծայած Միքայել Կյուրճյանի ժողովածուն «Փոքր գիրքի մը լայն բովանդակությունը» գրախոսականում Ազատյանը ենթարկում է մանրակրկիտ վերլուծության, խմբավորում ստեղծագործությունները և տալիս յուրաքանչյուր խմբի բովանդակային և գաղափարական գիծը: Ազատյանի կողմից առանձնացված «բարքերու, ըմբռնումներու եւ փոխուող ժամանակներու» մասին թատերախաղին հաջորդում են «խոնարհ խաւերուն նուիրում» պատմվածքները, հաջորդ երեք գործերը, «իբր հասարակաց գիծ ունին ազգային ցաւը», մյուս խումբը «Արևելքի մարդոց» մասին է: Դրանց մէջ Ազատյանը վեր է հանում Կյուրճյանի ստեղծագործության խորքային ասեկիքը՝ մարդկայինը, հասարակականը, ազգայինը, համամարդկայինը:

Երվանդ Ազատյանը նկատում է. «Գրողները ընդհանրապէս հանդէս կուզան տաղանդի մէկ երեսով, նոյնիսկ եթէ դրսևտրման այլ հնարաւորութիւններ ունենան»¹⁷, սակայն «Կիրճեան իր անձին բազմակողմանի երեսներով փոխադրուած է գրականութեան մէջ»¹⁸: Կյուրճյանը ստեղծագործել է գրեթէ բոլոր սեռերով և բացառությամբ տաղաչափված բանաստեղծությունների՝ մյուս դեպքերում հաջողել է: Խնդիրը միայն գրողների նախապատվությունը չէ: Գրականագետը նշում է, որ հայ գրականության պատմության մէջ գրողները ներկայացված են միատեսակ, միագույն, միասեռ և օրինակներ է բերում. Վահան Թեքեյանը, որն արձակ երկեր ևս գրել է, ներկայացվում է որպէս բանաստեղծ, Ռուբեն Սևակն արձակագիր է համարվում, թէև գրել է նաև բանաստեղծություններ: Արշակ Չոպան-

¹⁵ Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հատոր Բ, Երևան, «Սովետական գրող», 1981, էջ 116:

¹⁶ Զարմանյան Հ., Գրական գրույց՝ Երվանդ Ազատյանի հետ, «Ազգ» շաբաթթերթ, հմ. 17 (5705), 2022, հավելված:

¹⁷ Ազատեան Ե., Գրական գեղարուեստական սելեռումներ, Ամերիկահայ միջազգային գոլէճ, 1988, էջ 80:

¹⁸ Ազատեան Ե., Գրական գեղարուեստական սելեռումներ, Ամերիկահայ միջազգային գոլէճ, 1988, էջ 81:

յանը, ում գրչին են պատկանում պատմվածքներ և այլն, հայ գրականության մեջ հայտնի է որպես «Անահիտ» գրական հանդեսի խմբագիր և միջնադարյան տաղերգության հայտնաբերող: Կյուրճյանի պարագայում ևս Ազատյանը նույն խնդիրը տեսնում է և ընդգծում, որ այս գրողը ևս տարբեր սեռերով է ստեղծագործել՝ պատմվածքներ, այլաբանական հեքիաթներ, արձակ բանաստեղծություն, երգիծանք, և բոլորում էլ անգերագանցելի է: Եթե վերոնշյալ գրողները գոնե մեկ սեռով ներկայացված են հանրությանը, ապա Կյուրճյանի դեպքում վիճակն ավելի վատ է համարում. «Հակառակ որ մշակած բոլոր սեռերուն մէջ ալ Կիւրճեան յայտնաբերած է գրական անվիճելի վարպետութիւն մը, սակայն մեր գրադատները, եւ առ հասարակ մեր գրականութեան պատմութիւնը, զինք թողուցած են լուսանցքի վրայ»¹⁹:

Երվանդ Ազատյանը նշում է, որ անկախ տարածված կարծիքից, որ գրողներն աղքատ և հիվանդ պետք է լինեն, Կյուրճյանն ապահով կյանքով ապրեց և բեղուն գրիչ ունեցավ, տարիքը բացասական ազդեցություն չունեցավ թեմաների, զգացումների թարմության և գրական ճաշակի վրա: Գրականագետը նշում է նաև, որ թեև ուշացած, բայց այսօր Կյուրճյանի երկերն ուսումնասիրվում և հրատարակվում են: Զուգահեռներ է տանում Կյուրճյանի գրչընկերների հետ, որոնցից Տիգրան Կամսարականը շատ շուտ սպառեց իրեն, իսկ Օտյանը գրելու շոյալ շնորհը վերածեց ապրուստի միջոցի, իսկ Կյուրճյանն այնպես ապրեց և ստեղծագործեց, կարծեք կյանքը վախճան պիտի չունենար: Գրականագետը համոզված է, որ գրականությունը մեծապես շահում է նաև գրողի ստեղծագործական վայելքի շնորհիվ, ինչն առկա է Կյուրճյանի պարագայում: Նա ևս մշակել է համամարդկային և ներանձնական նյութեր, գրողին հուզել են մարդկային ճակատագիրը, հավիտենական հարցեր:

Միքայել Կյուրճյանը մահից առաջ իր անտիպ ստեղծագործությունների և նամակների պահոցը հանձնել է Ազատյանին, ում ջանքերով 1960-ական թթ.-ին Բեյրութում լույս տեսան Միքայել Կյուրճյանի երեք ժողովածուներ, իսկ չհրատարակված ամբողջ ժառանգությունը նա հանձնեց Երևանի Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանին, ինչն էլ հնարավորություն տվեց գրականագետ Հարություն Մկրյանին ամբողջացնելու գրողի ժառանգությունը և մատուցելու սերունդներին: Հիացմունք տածելով Միքայել Ս. Կյուրճյանի գրական ժառանգության հանդեպ՝ Ազատյանն առանձնահատուկ գնահատականի է արժա-

¹⁹ Ազատեան Ե., Ժամանակի և ժամանակակիցներու հետ, Թեքեան մշակութային միութիւն, Երեւան 2018, էջ 65-66:

նացրել Մկրյանի մենագրությունը, որով վերջինս գրականությանն ու գրականագիտական շրջանակին ներկայացրեց Կյուրճյանին՝ իր ամբողջ ժառանգությամբ՝ մոռացությունից փրկելով և վերաբժնորելով նրա տեղն ու դերը հայ գրականության մեջ: Ազատյանը մի կողմից ափսոսանք է հայտնում, որ այդ աշխատանքի հեղինակն ինքը չէ, մյուս կողմից անկեղծ ուրախությամբ փաստում է, որ հիացմունքը ոչ միայն այն պատճառով է, որ Կյուրճյանի անձի և ստեղծագործության անկեղծ հիացող է գտնվել, այլև գերազանցապես այն պատճառով, որ լիիրավ բանասեր է ձեռք առել նրա գրական ժառանգությունն ամբողջական վերլուծության ենթարկելու շնորհակալ աշխատանքը: «Կը տեսնեմ, որ մեկը «Նոր կեանք» թերթին մեջ շատ լուրջ յօդուածներ կը գրէ Միքայել Կիրճեանին մասին: Նախանձս շարժուեցաւ, ո՞վ է, որ Կիրճեանի մասին այդքան տեղեկութիւն ունի: Պարզուեցաւ, որ այդ մարդը Կիրճեանի ամբողջ գրականութեան ծանօթ է եւ ուսումնասիրած է: Ես այդ չափով չէի ուսումնասիրած: Ես Կիրճեանի ա՛նձը լավ կը ճանչնամ: Փոխանակ ես այդ մարդը գտնելու, ան զիս գտաւ: Զանգեց եւ ըսաւ, որ ամբողջացուցեր է «Մարտիկ աղա» վեպը եւ կ'ուզէ հրատարակել, ինծի ալ քոմփիլմենթ պիտի ընէ, քանի որ մարդ մը չը կայ, որ այս վեպի նախաբանը ինձմէ աւելի լաւ գրէ»²⁰:

Գրականագետը ««Մարտիկ աղա» երգիծավեպին տեղը գրականութեան մեջ» վերնագրի ներքո ներկայացնում է Մկրյանի կողմից Կյուրճյանի արժեքավոր երգիծավեպի՝ հարյուր տարի անց ամբողջացման անգնահատելի աշխատանքը:

Կյուրճյանի ժամանակի մեծագույն խնդիրը ազգային ողբերգությունն էր՝ հեղափոխությամբ և դրա մասնակի այլասերումով: Ազատյանը նկատում է, որ մեր ազգային հեղափոխությունը տիպարների բազմաթիվ տարատեսակներ է անմահացրել հայ գրականության մեջ: Միքայել Կյուրճյանի «Մարտիկ աղա» վեպի հերոսները նրանցից են: Վեպն իր արձագանքը գտնում է Օտյան-Կյուրճյան համագործակցությամբ գրված «Հերոսախաղ» թատերախաղի մեջ, որտեղ խտացված ներկայացվել են «Մարտիկ աղա»-ի կեղծ հերոսներն ու Օտյանի «Հեղափոխության մակաբույծները» ի ցույց դնելով ժամանակի հոգեվիճակը՝ ծիծաղի գունագեղ երանգներով: Ներկայացնելով երգիծական հզոր տաղանդով գրված այս վեպի ճակատագիրը՝ Ազատյանը ներկայացնում է ժամանակի մթնոլորտը, տիրող անհանդուրժողականությունը, կուսակցական բանակների բաժանվելու արատավոր երևույթը: Նշում է, որ մեր իրականության մեջ

²⁰ Զարմանյան Հ., Գրական գրույց՝ Երվանդ Ազատյանի հետ, «Ազգ» շաբաթաթերթ, հմ. 17 (5705), 2022, «Ազգ-մշակույթ» հավելված:

հեղափոխականներին քննադատելն ու ծաղրելը սրբապղծությանը համագոր արարքներ են համարվում, թեև մեր ազատագրական պայքարը գրականությանն առատ նյութ է տվել՝ թե՛ հերոսական, թե՛ երգիծական դրվագներով ու կերպարներով: Վերջինին անդրադառնալը վտանգավոր էր, բայց Կյուրճյանի տաղանդն այն հնարավոր դարձրեց: Նա կարողացավ ազգային երևույթները վերցնել և մշակել միջազգային մեծ վարպետներին համագոր ձեռագրով: Խոսելով «Մարտիկ աղայի»՝ «Նոր կյանք» երկշաբաթաթերթում հրապարակվելու մասին՝ Ազատյանը մեջբերում է նաև թերթի խմբագիր Արփիար Արփիարյանի «Կարմիր ժամուց» վեպը, որի թեման ևս հեղափոխությունն էր՝ իր հերոսներով, որոնք ներկայացնում են ժամանակի իրականության ամբողջ դիմագիծը և ի ցույց դնում մեր ողբերգության պատճառները: Օսմանյան ճնշումներից դժգոհ, սակայն պահպանողական և ստրկամիտ կեցվածքով հերոսն ի վերջո միանում է հեղափոխական շարժմանը՝ նախ վախից դրոշմած, ապա կեղծ խոստումների հավատալով: Ազատյանը ցավոտ խնդիրներ է շոշափում, որոնք մանրակրկիտ բացահայտում է՝ դիտարկելով բոլոր կողմերից: Վեպի ճակատագրին անդրադարձի նպատակը ճշմարտության հանդեպ բոլոր ժամանակներում տիրող անհանդուրժողականությունն ի ցույց դնելն է, երբ այն շոշափում է որոշակի ազդեցիկ շրջանակների անբարո դիմագիծը: Հերոսների ցայտուն կերպարներում ումանք իրենց են տեսնում, ուստի Ազատյանը պատահական չի համարում, որ Արփիարյանի հանդեպ մահափորձերը և սպանությունը, Վահան Թեքեյանի ահաբեկումը, «Արև» թերթի աշխատակիցների և անգամ իր՝ Ազատյանի հանդեպ ահաբեկումները ստիպեցին Կյուրճյանին, ով, անվտանգությունից ելնելով, «Մարտիկ աղա»-ն հրապարակում էր Պարույր ստորագրությամբ, կիսատ թողնել վեպը, որը միայն մեկ դար անց ամբողջացավ Մկրյանի շնորհիվ: Բ. գ. դ, պրոֆեսոր Սամվել Մուրադյանը «Երվանդ Օտյանի և Միքայել Կյուրճյանի հեղինակած կատակերգությունները» հոդվածում ևս խոսում է տիրող անհանդուրժողականության մասին. «Վեպի էջերում իրենց ճանաչած մեծահարուստները, հանրային ու կուսակցական գործիչները ջանում էին պարզել Պարույրի ինքնությունը և վրեժ լուծել նրանից ու դադարեցնել հետագա հրատարակությունը»²¹: Երվանդ Ազատյանը, ներկայացնելով «Մարտիկ աղա»-ի ծանր ճակատագիրն ու Մկրյանի անգնահատելի աշխատանքը, արձանագրում է. «Հարիւրա-

²¹ Մուրադյան Ս., Երվանդ Օտյանի և Միքայել Կյուրճյանի հեղինակած կատակերգությունները, «Բանբեր Երևանի համալսարանի», հմ. 1 (82), Երևան 1994, էջ 34-50:

մեակ մը ամբողջ Կիրճեանի «Մարտիկ աղա»ն ապրեցավ Շուպերթի «Անաւարտ համանուագ»ին ճակատագիրը. նոյն ատեն նաև համբար»²²:

Ազատյանի գրիչն ընդգծում է հայ երգիծաբանների երգիծանքի անհատական ձեռագրերի նրբերանգները: Օրինակ՝ նշում է, որ Պարոնյանի երգիծանքն անմիջական է ու պայթուցիկ, Օտյանինը՝ հետազդեցիկ, իսկ Կյուրճյանինն՝ ավելի նուրբ ու հաճախ աննկատելի, բայց խորունկ կերպով դեպքերի ու շարժառիթների խորքը թափանցող: Առանձին քննության առարկա է դարձնում կերպարաստեղծման վարպետությունը: Հայ երգիծական գրականությունը դիտարկում է համաշխարհային գրականության մեջ առկա զուգահեռների դաշտում: «Մեր երգիծական գրականութեան մեջ մեծն Պարոնեանի վարպետն ու մենտորը կը մնայ Մովիերը՝ իր պայթուցիկ ծիծաղով եւ բարքերը հարուածելու իր անգութ կիրքով: Սակայն Կիրճեանի ներշնչումը կու գայ Ալֆոնս Տոտէէն, որուն հանդեպ մեծ պաշտամունք ունէր ան»²³: Կյուրճյանի լեզվի ճոխության մասին Ազատյանի դիտարկումը տեսնում ենք Ալֆոնս Դոդէի «Տարասկոնցի Տարտարենը» երկի Կյուրճյանի թարգմանության մասին կարծիքն ընթերցելիս. «Իմ վերջնական եզրակացութիւնս այն է, որ եթէ ֆրանսացի գրողը հայերէն գիտնար, ճիշդ այս լեզուով պիտի գրէր»²⁴: Կյուրճյանի «Մարտիկ աղայի» առանձնահատկություններն Ազատյանն ընդգծում է Դոդէի Տարասկոնցի Տարտարենի, Մերվանտեսի Դոն Կիխոտի, Վոլտերի Դոկտ. Պանկլոսի, Օտյանի Փանջունու հետ զուգահեռներով: Բոլոր երգիծական վեպերի հերոսներն էլ թևաթափ վերադառնում են տուն՝ այն համոզմունքով, որ տարել են իրենց կյանքի մեծագույն հաղթանակը: Միակ բացառությունն այն է, որ առաջինները մերժում են ընդունել իրենց պարտությունը՝ մինչև վերջ հաղթանակի հավատով խաբելով իրենք իրենց, իսկ Մարտիկ աղան ընդունում է իր պարտությունը:

Կյուրճյանի գրաքննադատական գործերին շատերն անձանթ են, ոմանք հպանցիկ են ծանոթ, քանի որ դրանք սփռված են մամուլի էջերում, ուստի գրականագետը «Գրագետը Կիրճեանի մէջ» ենթավերնագրի շրջանակում երախտագիտության առանձին խոսք է ասում Մկրյանի՝ այս ուղղությամբ գործադրած ջանքերի վերաբերյալ:

²² Ազատեան Ե., Ժամանակի և ժամանակակիցներու հետ, Թեքէեան մշակութային միութիւն, Երեւան 2018, էջ 77:

²³ Ազատեան Ե., Ժամանակի և ժամանակակիցներու հետ, Թեքէեան մշակութային միութիւն, Երեւան 2018, էջ 84:

²⁴ Զարմանյան Հ., Գրական գրույց՝ Երվանդ Ազատյանի հետ, Ազգ՝ շաբաթաթերթ, հմ. 2022 17 (5705), հավելված:

Ազատյանը «Վերականգնելով Կիրճեանի գրական ժառանգութիւնը» աշխատության մեջ ծավալուն վերլուծության է ենթարկում Մկրյանի մենագրությունը, որով հիմք է դրվում կյուրճյանագիտությանը: Նա աշխատությանը մոտենում է բժախնդիր գրականագետի ազնվությամբ և այն գնահատում՝ ելակետ ունենալով օբյեկտիվ քննությունը:

Գրականագետը հիշում է Կյուրճյանի սիրած վառենիները, որոնք գրողը երագում էր տնկված տեսնել իր գերեզմանին, և որոնց մասին Ազատյանը հիշատակել էր՝ հռետորական հարց հնչեցնելով. «Ո՞վ պիտի տնկէ վառենի մը»: Մկրյանի աշխատությունն ուսումնասիրելուց և կշռելուց հետո գրականագետը խոստովանում է. «Յարութիւն Մէքէրեան իր այս շնորհակալ երկով խորհրդանշականօրէն տնկած է այդ վառենին»²⁵:

Եզրակացություն

Կյուրճյանի հայացքներին անդրադառնալիս Ազատյանն անդրադարձ է կատարում նաև Մփյուռքի կուսակցական կյանքի որոշ դրվագների: Գաղտնիք չէ, որ հայկական գաղթօջախներում ծավալվող հասկապես մշակութային գործունեությունը կենտրոնանում էր կուսակցական ակտիվների շուրջ: Նրանց ֆինանսավորմամբ և նախաձեռնությամբ էին գործում դպրոցներ, մշակութային միություններ, հրատարակչություններ: Ազատյանը հիացմունքով է ընդգծում, որ Կյուրճյանին խորթ էին գաղափարական լոզունգները, անկաշկանդելի և անկաղապարելի հոգի ուներ: Նրան տեսնում ենք Սահմանադիր ռամկավար կուսակցության անդամների, «Արևի» հիմնադիրներից Թեքեյանի և Տամատյանի կողքին, աշխատակցում էր Լոնդոնում հրատարակվող «Նոր կյանք» թերթին, սակայն հայտնի չէ՝ որևէ կուսակցության հարել է, թե՛ ոչ: Ազատյանն ավելի հակված է այն տեսակետին, որ Մփյուռքի մտավորականությունն այսպես թե այնպես որևէ կուսակցության մասնիկ էր, ուստի Կյուրճյանը, որ մտերմություն ուներ նրանցից շատերի հետ և կանգնած էր կարևոր շատ ձեռնարկների ակունքում, կուսակցականության վերաբերյալ բնական հարցի տեղիք է տալիս: Ազատյանը պատճառը գիտի. գաղափարապաշտ էր, սակայն ավելի շատ իրապաշտ. թույլ չի տալիս, որ գաղափարը կաղապարի միտքը: Կուսակցական չէր, սակայն ավելի հավատարիմ մնաց այդ շրջանակին, քան կուսակցության անունով կուրծք ձեռողներից շատերը: «Ճանչնալով Կիրճեանը, կը խորհիմ, թէ անոր յարուրը այդ շրջանակներուն՝ Արփիարեանի, Թեքէեանի, Տամատեանի ու Բաշալեանի նման

²⁵ Ազատեան Ե., Ժամանակի և ժամանակակիցներու հետ, Թեքէեան մշակութային միութիւն, Երեւան 2018, էջ 375:

մարդոց մտաւորական մտերմութիւնն էր՝ աւելի քան կուսակցական զինւորագրութիւն մը»²⁶: Ազատյանի հիացմունքը նաև այն պատճառով է, որ Կյուրճյանի ինքնուրույն գրականությունը գաղափարական որևէ ուղղվածության բռնաշապիկ չկրէց: Նրա գաղափարապաշտությունը պարզ ազգային դավանանք էր, և այդ լույսի տակ էլ իր գրականության մէջ խտացրէց ազգային ցավը, սրբացրէց ազգային պայքարի մասնակիցներին և մերկացրէց կեղծ առաքյալներին: Նույն մոտեցումն է ցուցաբերում նաև Ազատյանը: Երբ ձեռքն է վերցնում գրականագետի և հրապարակագրի գրիչը, հանում է կուսակցական շապիկը: Այս կարծիքին է նաև արձակագիր Հակոբ Կարապէնցը. «Մխիթարական է նաեւ այն, որ Ազատեանը զերծ է հատուածային խաղերից ու կուսակցական քարոզչութիւնից: Սեւին սեւ է ասում, սպիտակին՝ սպիտակ: Եւ այդ է կարեւորը»²⁷:

Հոդվածի հիմքում դրված է վերլուծության մեթոդը: Աշխատանքում օգտագործվել են նաև համեմատության, համադրության և վերացարկման մեթոդները:

Գրականություն

1. Ազատեան Ե, Ժամանակի և ժամանակակիցներու հետ, Թէքէան մշակութային միութիւն, Երեւան 2018, 456 էջ
2. Ազատեան Ե, Գրական գեղարուեստական սեւեռումներ, Ամերիկահայ միջազգային գոլէճ, 1988, 332 էջ:
3. Զարմանյան Հ, Գրական գրույց՝ Երվանդ Ազատյանի հետ, Ազգ շաբաթաթերթ, հմ. 17 (5705), Երևան, 2022, հավելված:
4. Թէօլէօլեան Մ., Դար մը գրականութիւն, 1850-1950, հատոր Ա, Գահիրէ, 1955, 597 էջ:
5. Մուրադյան Ս, Երվանդ Օտյանի և Միքայել Կյուրճյանի հեղինակած կատակերգությունները, «Բանբեր Երևանի համալսարանի», հմ. 1 (82), Երևան 1994, էջ 34-50:
6. Ստեփանյան Գ, Կենսագրական բառարան, հատոր Բ, Երևան, «Սովետական գրող», 1981, 382 էջ:

²⁶ Ազատեան Ե., Ժամանակի և ժամանակակիցներու հետ, Թէքէան մշակութային միութիւն, Երեւան 2018, էջ 70:

²⁷ Կարապէնց Յ., Երկու աշխարհ, Blue Crane Buks, Wotertown, Massachusetts, 1992, էջ 239:

Портрет Микаэла Кюрчяна в творчестве Ерванда Азатяна

Зарманиян Эрмине

Резюме

Ключевые слова: Больница Гелиополис, Арутюн Мкрян, Мартик Ага, члены Конституционной партии Рамкавар, литературовед в образе Кюрчяна, Альфонс Тоте, Ерванд Отян, братья Конфур, театральная постановка «Двадцать лет спустя».

В статье представлены характер и литературное наследие писателя Микаэла Кюрчяна с точки зрения Ерванда Азатяна. Последний, будучи очевидцем хода литературы армянской диаспоры, современником литературных деятелей и событий, проделал неоценимую работу по спасению от забвения литературного наследия Микаэла Кюрчяна. В очерках, посвященных писателю, мы знакомимся с его образом, характером, трагическими эпизодами его жизни, обстоятельствами его смерти, политической атмосферой, в которой писатель создавал литературу. Перо Азатяна сделало предметом особого внимания судьбу сатиры Микаэла Кюрчяна «Мартик Ага», рассказывая о ней, он представляет суматоху вокруг романа, путаницу, связанную с отнесением романа к перу Отяна, который был написан в соавторстве с Ервандом Отяном, восстановление недостающей части неоконченного романа «Мартик Ага» спустя сто лет литературоведом Арутюном Мкряном. В отдельном разделе Ерванд Азатян представил обширную работу, проделанную Арутюном Мкряном, которая посвящена изучению литературы Микаэла Кюрчяна благодаря ценному архиву, который Азатян передал в дар Музею литературы и искусства имени Егише Чаренца. Азатян обращается к особенностям сатиры армянских сатириков, проводит параллели и разделяет характерный сатирический почерк Микаэла Кюрчяна, мастерство создания персонажей. Литературовед также обращается к проблеме представленности писателей в одном жанре в истории армянской литературы, независимо от того, что один писатель мог создать ценную литературу в разных жанрах. Ерванд Азатян отдельно сослался на литературно-критическую работу Микаэла Кюрчяна, которая также неизвестна широкому кругу читателей. Он также представил отношения французско-армянского актера, режиссера Жирайра Папазяна (Бабазян) и художницы Норы Ипекян с Микаэлом Кюрчяном.

Научная статья направлена на то, чтобы представить общественности

эту многогранную и обширную работу, проделанную Ервандом Азатяном, подчеркнув ценность документалиста-очевидца и представив наблюдения и суждения Ерванда Азатяна о личностях, оставивших наследие высокого искусства в армянской литературе. В статье мы также представили особенности Ерванда Азатяна как автора рецензий, систему создания образа и объем эстетических восприятий конструкции материала. В свете развернувшейся в Зарубежье партийной деятельности, организация общественной и культурной жизни имеет свои особенности. В исследовании мы представили исследование деятельности Микаэла Кюрчяна с точки зрения Ерванда Азатяна, провели параллель между деятельностью этих двух интеллектуалов, чтобы подчеркнуть исключение политико-идеологического влияния на их литературу.

Mikayel Kyurchyan's Portrait in the Works of Yervand Azatyan

Zarmanyun Hermine

Summary

Key words: *Heliopolis Hospital, Harutyun Mkryan, Martik Agha, members of the Ramkavar Constitutional Party, literary critic in the image of Kyurchyan, Alphonse Tote, Yervand Otyan, Konfour brothers, theatrical performance "Twenty years later"*

The article presents the character and literary heritage of the writer Mikayel Kyurchyan from the perspective of Yervand Azatyan. The latter, being an eyewitness to the course of the literature of the Armenian Diaspora, also being a contemporary of prominent writers and literary events, did an invaluable job of saving the literary heritage of Mikayel Kyurchyan from oblivion. In essays dedicated to the writer, we get acquainted with his character, tragic episodes of his life, the circumstances of death, the political atmosphere in which the writer created his works. Azatyan made Mikael Kyurchyan's satire "Martik Agha", which was written in collaboration with Yervand Otyan, to special attention. He represents the controversy surrounding the book, the confusion of attributing the book to Otyan's pen, and the restoration of the missing section of the incomplete novel "Martik Agha" after a century by the literary critic Harutyun Mkryan. In a separate section, Yervand

Azatyán presented the extensive work done by Harutyun Mkryan, which is devoted to the study of Mikayel Kyurchyan's literature thanks to a valuable archive, which Azatyán donated to the Yeghishe Charents Museum of Literature and Art. Azatyán refers to the peculiarities of Armenian satirists' works, draws parallels and shares the characteristic satirical style of Mikael Kyurchyan, the skill of creating characters. The literary critic also addresses the problem of writers' representation in Armenian literature regardless of the fact that a writer could create literary works in different genres. Yervand Azatyán specifically referred to the literary-critical work of Mikayel Kurchyan, which is also unknown to a wide range of readers. He also presented the relationship of French-Armenian actor, director Zhirayr Papazyán (Babazyán) and artist Nora Ipekyán with Mikayel Kyurchyan.

The scientific article aims to present the multifaceted and extensive work done by Yervand Azatyán, emphasizing the value of an eyewitness documentary and presenting Yervand Azatyán's observations about the personalities who left a legacy of high art in Armenian literature. In the article, we also presented the features of Yervand Azatyán as the author of reviews, the image creation system and the scope of aesthetic perceptions of the material design. The way social and cultural life is organized has unique features in light of the party activity that has taken place abroad. In the study, we presented an analysis of Mikayel Kyurchyan's literary works from the perspective of Yervand Azatyán, drew parallels between the activities of these two intellectuals in order to stress the lack of political and ideological influence on their works.

Ներկայացվել է 22.09.2022 թ.
Գրախոսվել է 30.09.2022 թ.
Ընդունվել է տպագրության 25.11.2022 թ.